

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. փետրվարի 7-ից 13-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Փետրվարի 7-9-ը, 12-13-ը դիտվել է առանց տեղումների եղանակ: Փետրվարի 10-11-ը դիտվել են տեղումներ, լեռնային շրջաններում՝ ձյան, նախալեռնային և հովտային շրջաններում՝ անձրևի տեսքով: Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է՝ Ջերմուկում 36.0մմ, Արագած բ/լ-ում և Որոտանի լ-ցքում 20-21մմ, մյուս շրջաններում տեղումները չեն գերազանցել 13մմ-ը:

Օդի օրական միջին ջերմաստիճանը փետրվարի 7-8-ը, 11-13-ը բարձր է եղել նորմայից՝ 1-5 (11-ին Արարատյան դաշտում՝ 6-8, 12-13-ին՝ 4-6), 9-10-ը՝ 5-8 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքում՝ հովիտներում՝ +17...+18°C, նախալեռներում՝ +8...+11°C, Տավուշում՝ +12...+16°C, Արարատում՝ +14, Լոռիում՝ +10...+13°C, Արմավիրում՝ +12, Երևանում՝ +11...+12°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +13°C, լեռներում՝ +3°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +6...+12°C, լեռներում՝ +1...+2°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +6°C, լեռներում՝ +3...+5°C, Գեղարքունիքում՝ +1...+6°C, Շիրակում՝ 0...+8°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Շիրակում՝ -10...-18°C (Աշոցքում՝ -21), Արագածոտնում՝ լեռներում՝ -15...-16°C, նախալեռներում՝ -5...-8°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -14°C, նախալեռներում՝ -4°C, Գեղարքունիքում՝ -8...-15°C, Կոտայքում՝ լեռներում՝ -11...-12°C, նախալեռներում՝ -7°C, Լոռիում՝ -6...-10°C (Տաշիրում՝ -14°C), Արմավիրում՝ -8°C, Երևանում՝ -5...-7°C, Արարատում՝ -6...-7°C, Տավուշում՝ -3...-6°C, Սյունիքի նախալեռներում՝ -6...-10°C, հովիտներում՝ -4...+1°C:

Փետրվարի 4-5-ը առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 100-500մ տեսանելիությամբ:

Շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում մինչև 16-23մ/վրկ արագությամբ:

Փետրվարի 13-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը կազմում է Արագած բ/լ-ում՝ 87սմ, Ջերմուկում՝ 84սմ, Ամբերդում՝ 50սմ, Հրազդանում՝ 46սմ, Ամասիայում՝ 42սմ, Սեմյոնովկայում՝ 38սմ, Ֆանտանում՝ 35սմ, Ապարանում՝ 32սմ, մնացած լեռնային շրջաններում՝ 7-24սմ: Արարատյան դաշտում, Տավուշում, Լոռիում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայում է:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով (06.02.22-13.02.2022թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.37մ (13.02.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 16 սմ-ով: